



Helsinki Citizens' Assembly

Vanadzor Office

Քաղաքական բանտարկյալները Հայաստանում

Տեղեկանք

Պատրաստվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից

թարմացվել է 2015 թ. սեպտեմբերի 28-ին

Նախաբան

Հայաստան-ԵՄ Ասոցացման պայմանագրի նախաստորագրումը ձախողելուց և Եվրասիական Տնտեսական միությանը միանալու վերաբերյալ 2013 թ. Մերժ Սարգսյանի որոշումից հետո Հայաստանում նկատելի թափ առավ իրավապաշտպանների, լրագրողների և քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ իշխանությունների ոտնձգությունները:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը Հայաստանում վերջին երկու տարիների ընթացքում ավելի է դժվարանում. իրավապաշտպան կազմակերպությունների և անհատ ակտիվիստների գործունեության դաշտն օրեցօր ավելի է սահմանափակվում օրենսդրական փոփոխություններով և իշխանությունների պատժիչ գործողություններով:

Խաղաղ հավաքների ազատության և ազատ արտահայտվելու իրավունքի մեծածավալ խախտումները, ինչպես նաև ապաքաղաքական ցույցից տարբերվող բողոքի ցանկացած ակցիաների խիստ ճնշման նպատակով արդարադատության համակարգի կիրառումը վկայում են, որ ՀՀ իշխանություններն ակնհայտորեն պատժիչ դիրքորոշում են որդեգրել այլախոհության ցանկացած դրսևորման նկատմամբ:

Ի պաշտպանություն քաղաքական բանտարկյալների նախաձեռնվել են բողոքի մի շարք ակցիաներ՝ մամուլի ասուլիսներ, խաղաղ երթեր, ցույցեր, ստորագրահավաքներ, որոնց մասնակցել են հարյուրավոր մարդիկ՝ քաղաքացիներ, ակտիվիստներ, իրավապաշտպաններ, ընդդիմադիր քաղաքական գործիչներ:

Մի շարք իրավապաշտպաններ և ընդդիմադիր քաղաքական գործիչներ ճանաչել և դատապարտել են ՀՀ-ում քաղաքական հետապնդումները:

Հայտարարություններով հանդես է եկել Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը¹, Շանթ Հարությունյանին և ընկերների նկատմամբ հետապնդումներին է անդրադարձել նաև Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը:

Սույն տեղեկանքում ներկայացված է ՀՀ-ում քաղաքական բանտարկյալների ցուցակը, որը կազմվել է ԵԽԽՎ-ի կողմից սահմանված “քաղաքական բանտարկյալ”² եզրույթից ելնելով:

Տեղեկանքում ընդգրկված են նաև այն անձանց անունները՝ դեպքերի մանրամասն նկարագրություններով, ովքեր դատապարտվել են իրենց քաղաքական հայացքների համար և պատիժը կրելուց հետո ազատ են արձակվել:

¹ Statement "of the EU EAP Armenian National Platform on cases of political persecution in Armenia":

<https://eaparmenianews.wordpress.com/2014/02/18/issue-160/>

EU EaP CSF Armenian National Platform Statement regarding the Trial of Shahan Harutyunyan:

<https://eaparmenianews.wordpress.com/2014/09/30/issue-189/>

² Parliamentary Assembly of the Council of Europe (PACE) Resolution No. 1900, from 3 October 2012 <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=19150&lang=EN>

Ներկայումս ՀՀ-ում անազատության մեջ է գտնվում քաղաքական հայացքների համար հետապնդվող 13 անձ:

1. Շանթ Հարությունյան
2. Ավետիս Ավետիսյան
3. Լիպարիտ Պետրոսյան
4. Արմեն Հովհաննիսյան
5. Վարդան Վարդանյա
6. Ալբերտ Մարգարյան
7. Մկրտիչ Հովհաննիսյան
8. Վահե Մկրտչյան
9. Հայկ Հարությունյան
10. Ալեք Պողոսյան
11. Վոլոդյա Ավետիսյան
12. Հայկ Կյուրեղյան
13. Վարդան Պետրոսյան

Տեղեկանքը պատրաստելու համար ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից մշտադիտարկվել են մի շարք Ձանգվածային լրատվական միջոցներ, ուսումնասիրվել են դատավճիռները, դիտարկվել են դատական նիստերը, տեղեկատվություն է հավաքվել նաև փաստաբաններից և հարազատներից: Տեղեկանքում մանրամասն ներկայացված են յուրաքանչյուր քաղաքական բանտարկյալի, կամ նակին բանտարկյալի կալանավորման հանգամանքները, քաղաքական դրդապատճառները և լուսանկարները:

Շանթ Հարությունյան և ընկերներ

1. Շանթ Հարությունյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով)



Դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով, մեղավոր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքում: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Կալանքը կրում է ՀՀ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում: 2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

2. Վարդան Վարդանյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով):



Դատապարտվել է ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով, մեղավոր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքում: Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Կալանքը կրում է ՀՀ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

3. Ալեք Պողոսյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (Խուլիզանություն՝ մի խումբ անձանց հետ, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով):



Դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով, մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքում: Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Կալանքը կրում է ՀՀ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

4. Ավետիս Ավետիսյանին

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (Խուլիզանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով):



Դատապարտվել է ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով, մեղավոր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքում: Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ չի ընդունել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Կալանքը կրում է ՀՀ «Սևան» քրեակատարողական հիմնարկում:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

5. Լիպարիտ Պետրոսյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (Խուլիզանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով):



Դատապարտվել է ազատագրկման 5 (հինգ) տարի ժամկետով, մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքում: Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Կալանքը կրում է ՀՀ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

6. Ալբերտ Մարգարյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը` 2013 թ. նոյեմբերի 5

Առաջադրված մեղադրանքը` ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (Խուլիզանություն` մի խումբ անձանց հետ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով) և 316-րդ հոդվածի 2-րդ մաս (իշխանության ներկայացուցչի հանդիսացող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը):



Դատապարտվել է ազատագրկման 6 (վեց) տարի ժամկետով, մեղավոր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքում: Դատարանը ճանաչել է Ալբերտ Մարգարյանի անմեղությունը` ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ և այդ մեղադրանքով արդարացվել է` հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Կալանքը կրում է ՀՀ «Սևան» քրեակատարողական հիմնարկում:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

7. Վահե Մկրտչյան

Զերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ՝ զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով) և 316-րդ հոդվածի 2-րդ մաս (իշխանության ներկայացուցչի հանդիսացող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը):



Դատապարտվել է ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով, մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներում: Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Պատիժը կրում է «Կոշ» քրեակատարողական հիմնարկում:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

8. Սևակ Մնացականյան

Զերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ՝ զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով):



Դատապարտվել է ազատազրկման 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցանքում: Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Ազատ է արձակվել 2015 թ. մայիսի 5-ին դատարանի որոշմամբ պատիժը կրելուց հետո:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

9. Արմեն Հովհաննիսյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5



Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ՝ զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով):

Դատապարտվել է ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով: Մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, զուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով):

Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Պատիժը կրում է «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում: Ազատ կարձակվի 2015 թ. նոյեմբերի 5-ին:

Գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

10. Տիգրան Պետրոսյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5



Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ՝ զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով):

Դատապարտվել է ազատազրկման մեկ տարի ժամկետով: Մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցանքում (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, զուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով):

Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: Տիգրան Պետրոսյանը չի բողոքարկել վերաքննիչ դատարանի դատավճիռը: Կալանքը կրել և ազատ է արձակվել 2014 թ. նոյեմբերի 5-ին:

11. Հայկ Հարությունյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5




Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով) և 268-րդ հոդվածի 1-ին մաս (առանց իրացնելու նպատակի՝ զգալի չափերով հոգեմետ նյութ ապօրինի պահելը):

Դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներում: Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Կալանքը կրում է «Սևան» քրեակատարողական հիմնարկում:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

12. Մկրտիչ Հովհաննիսյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5



Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով) և 316-րդ հոդվածի 2-րդ մաս (իշխանության ներկայացուցչի հանդիսացող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը):

Դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: Մեղավոր է ճանաչվել քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքում: Դատարանը ճանաչել է Մկրտիչ Հովհաննիսյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ և նրան այդ մեղադրանքով արդարացրել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը:

Մկրտիչ Հովհաննիսյանը չի բողոքարկել ՀՀ Վերաքննիչ դատարանի դատավճիռը: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Կալանքը կրում է «Սևան» քրեակատարողական հիմնարկում:

1.13 Միսակ Առաքելյան

Ձերբակալման ամիս ամսաթիվը՝ 2013 թ. նոյեմբերի 5

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մաս (Խուլիգանություն՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով):



2013 թ. նոյեմբերի 11-ին որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, 2014 թ. ապրիլի 1-ին Մ. Առաքելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է, որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Նույն օրը Միսակ Առաքելյանը ազատ է արձակվել՝ չորս ամիս քսանվեց օր անազատության մեջ պահվելուց հետո:

Դատապարտվել է տուգանքի նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով: Մեղավոր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում:

Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատարանի որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

14. Շահեն Հարությունյան

Առաջադրված մեղադրանքը՝ Անչափահաս Շահեն Հարությունյանին, 2014 թ. ապրիլի 2-ին՝ նախաքննության ավարտին, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով (Խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց հետ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ՝ զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով):



Դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: Դատարանի որոշմամբ մեղավոր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Շահեն Հարությունյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 4 (չորս) տարի ժամկետով:

Դատարանը նաև որոշել է Շահեն Հարությունյանին և նրա օրինական ներկայացուցչին պարտավորեցնել չփոխել Շահեն Հարությունյանի մշտական բնակության վայրը՝ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնելով ՀՀ

արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վրա:

Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հոկտեմբերի 17-ի դատավճիռը: 2015 թ. մայիսի 8-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել: Դատարանի որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

2015 թ. սեպտեմբերի 15-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

Դեպքի նկարագիրը

2013 թ. նոյեմբերի 5-ին Շանթ Հարությունյանը, ով դեռևս հոկտեմբերի 31-ից «Ես սկսում եմ հեղափոխություն» կարգախոսով նստացույց էր սկսել Երևան քաղաքի «Ազատության» հրապարակում, ձեռնարկել էր «Դիմակների երթ», որը նվիրված էր Գայ Ֆոքսի միջազգային օրվան³:

«Ես դուրս եմ եկել արժեքների հեղափոխություն իրականացնելու, որի մեջ մտնում է նաև իշխանության տապալումը». ասել է Շանթ Հարությունյանը 2013 թ. նոյեմբերի 1-ին «Հետք» օրաթերթին տրված հարցազրույցում:

Շանթ Հարությունյանը ամիսներ առաջ հայտարարել էր, որ Հայաստանում հեղափոխություն անելու մտադրություն ունի: Նա ասել է, որ ինքն իրականացնելու է **արժեքային հեղափոխություն**, քանի որ Հայաստանի խնդիրների առանցքում արժեքային դեգրադացիան է: Որպես հեղափոխության կոնկրետ օր Շանթ Հարությունյանը նշել էր ՌԴ նախագահ Վ.Պուտինի՝ Հայաստանի Հանրապետություն այցելության օրը՝ 2013 թ. դեկտեմբերի 2-ը, նշել էր նաև, որ եթե ժողովուրդը ավելի շուտ պահանջի հեղափոխություն, ինքը չի կարող դեմ գնալ ժողովրդի կամքին:

2013 թ. նոյեմբերի 5-ին Շանթ Հարությունյանն իր **աջակիցների** հետ Երևանի Մաշտոցի պողոտայով շարժվել է դեպի նախագահական նստավայր, սակայն երթն ավարտվել է սկսվելուց մի քանի րոպե անց՝ Երևանի Մաշտոցի պողոտայի սկզբնամասում ոստիկանների և մի խումբ ցուցարարների միջև տեղի ունեցած բախումից հետո: Տասնյակ քաղաքացիներ բերման են ենթարկվել ոստիկանության բաժանմունքներ: Երթը մեկնարկելուց առաջ Շանթ Հարությունյանը հայտարարել է, որ իրենք բացի բենզինի շշից, քարից, փայտից, ռազատկից և մարգանցով կա բրոնզից ուրիշ «զենք» չունեն...: Հարկ է նշել, որ բենզինի շիշ և քար Շանթ Հարությունյանի և նրա գաղափարակից ընկերների մոտ չեն եղել:

2013 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ոստիկանությունը պաշտոնական հաղորդագրություն է տարածել, որտեղ ասվում է, որ ոստիկանությունը հորդորել է Շանթ Հարությունյանին «զերծ մնալ հակաիրավական վարքագիծ դրսևորելուց», իսկ փաստացի այդ վարքագիծը կանխելու ուղղությամբ որևէ միջոց ոստիկանության կողմից չի ձեռնարկվել այն դեպքում, երբ նշված իրերը երթից դեռևս ժամեր առաջ բաց վիճակում դրված են եղել «Ազատության»

³ Նոյեմբերի 5-ն ամբողջ աշխարհում ու հատկապես Մեծ Բրիտանիայում նշում են, որպես հետհեղուինյան ընդվզում ընդդեմ իշխանությունների նրանց ամենաթողության և կաշառակերության: Ջեյմս Մակթիգի աշխարհահռչակ «V նշանակում է Վենդետտա» ֆիլմից հետո շարժման մեջ ավելացավ ևս մեկ խորհրդանիշ՝ 17-րդ դարի ընդդիմադիր կաթոլիկ Գայ Ֆոքսի նմանությամբ դիմակը, որը հատկապես մեծ տարածում է ստացել վերջին տարիներին՝ շնորհիվ Anonymous հաքերային խմբի գործողությունների:

հրապարակում: Ոստիկանության նման վարքագիծը կարելի է գնահատել որպես «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով ոստիկանությանը վերապահված պարտականության՝ «հանցագործությունները կանխելու և խափանելու» խախտում, եթե իհարկե նրանք նպատակ չունենին սադրել ցուցարարներին:

2013 թ. նոյեմբերի 5-ին ձերբակալվել են 20 անձ, որոնցից 6-ը՝ ազատ են արձակվել և գործով ներգրավվել որպես վկա: Ընդդիմադիր քաղաքական գործիչ և «Ցեղակրոն» կուսակցության նախագահ Շանթ Հարությունյանը, նրա 12 գաղափարակից ընկերները և ևս մեկ անձ՝ Անուշավան Գրիգորյանը⁴, կալանավորվել են 2013 թ. նոյեմբերի 8-ին:

Ձերբակալված 14 անձանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 316 հոդ. 1-ին և 2-րդ մասերի հատկանիշով՝ **իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը**: Որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամիս ժամկետով: 2013 թ. դեկտեմբերի 28-ին կալանքի ժամկետը երկարացվել է ևս երկու ամիս ժամկետով՝ մինչև 2014 թ. մարտի 5-ը:

Նախաքննական մարմնի 2014 թ. մարտի 31-ի որոշմամբ ներկայացված մեղադրանքները փոփոխվել են: Առաջադրված մեղադրանքները վերավորակվել են ՀՀ ՔՕ 258 -րդ հոդվածի հատկանիշներով՝ **Խուլիգանություն**:

Ըստ պաշտպանական կողմի մեղադրանքի վերավորակումը անհիմն է և չպատճառաբանված: Բացի դրանից Շանթի ու ընկերների գործն իրավագիտական պրակտիկայի մեջ առաջին դեպքն է, երբ Ոստիկանության ծառայողի նկատմամբ կատարված գործողությունը դիտվում է որպես խուլիգանություն: Ըստ պաշտպանական կողմի այսպիսով վերացվում է ոստիկանության ծառայողի ու քաղաքացու միջև տարբերությունը, ինչը կարող է դառնալ նոր քրեական քաղաքականության սկիզբ:

Ներպետական ատյաններում արդարադատության չհասնելով Շանթ Հարությունյան և ընկերներ գործով գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ: Փաստաբանները և վստահորդները ՄԻԵԴ-ից խնդրել են ճանաչել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 11-րդ հոդվածի 1-ին մասի խախտումները: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասն առնչվում է արդար դատաքննության իրավունքին, իսկ հոդվածի 2-րդ մասը՝ անմեղության կանխավարկածին:

Պաշտպանական կողմը, մասնավորապես, գտնում է, որ Շանթ Հարությունյանի ու մյուսների գործով 134 էջից կազմված դատավճիռը կայացվել է աննախադեպ հապճեպ, երկու ժամվա ընթացքում, որոշ ամբաստանյալների մասով խախտվել են վերջին խոսքի ու պաշտպան ունենալու իրավունքները, խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Մասնավորապես, մինչև գործով դատարանի կողմից վճիռ կայացնելը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Նյու-Յորքի Կոլումբիայի համալսարանում ուսանողների հետ հանդիպման ժամանակ խախտել է անմեղության կանխավարկածը՝ հայտարարելով, թե Շանթ Հարությունյանը հանցագործություն է կատարել: Փաստորեն

⁴ Անուշավան Գրիգորյանը չի հանդիսացել Շանթ Հարությունյանի գաղափարակից ընկերը: Նա 2013 թ. նոյեմբերի 5-ին դուրս է գրվել հոգեբուժական բուժհաստատությունից և պատահաբար է գտնվել Ազատության հրապարակում: Իր պաշտպանի միջնորդությամբ ենթարկվել է փորձաքննության, որի արդյունքում ճանաչվել է անմեղունակ և դատարանի որոշմամբ ազատվել է կալանքից:

երկրի նախագահը որակում և գնահատական է տվել գործին և դրանով ուղղակիորեն ուղղորդել դատարանին:

Շանթ Հարությունյանի և նրա գաղափարից ընկերների նկատմամբ ճնշումները նախաքննության ընթացքում

○ Բռնություններ ՀՀ Ոստիկանության կողմից

Շանթ Հարությունյանը և Վարդան Վարդանյանը իրավապաշտպան Արթուր Սաքունցին և ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանին հայտնել են ոստիկանապետի և փոխոստիկանապետի, ինչպես նաև վերջիններիս ուղեկցող ոստիկանների կողմից իրենց բռնությունների ենթարկելու, սեռական բնույթի հայիոյանքներ և ընտանիքի, մասնավորապես Շանթ Հարությունյանի 14-ամյա որդու նկատմամբ սպառնալիքներ հնչեցնելու մասին:

2013 թ. նոյեմբերի 7-ին ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը իր լիազորությունների շրջանակներում գրությամբ դիմել է ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քննության առնելու համար այն տեղեկությունները, որ 2013 թ. նոյեմբերի 6-ին ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ում իրեն փոխանցել Շանթ Հարությունյանը և Վարդան Վարդանյանը:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար, իրավապաշտպան Արթուր Սաքունցը նոյեմբերի 12-ին հայտարարություն է տարածել, որում նշել է, որ նոյեմբերի 11-ին այցելել է Շանթ Հարությունյանին, որը հաստատել է ոստիկանապետի և փոխոստիկանապետի, ինչպես նաև վերջիններիս ուղեկցող ոստիկանների կողմից իրեն բռնությունների ենթարկելու, սեռական բնույթի հայիոյանքներ և ընտանիքի, մասնավորապես՝ 14-ամյա որդու նկատմամբ սպառնալիքներ հնչեցնելու մասին փաստերը:

Հատուկ քննչական ծառայությունում քրեական գործ հարուցելը մերժվել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

○ Անհիմն սահմանափակումներ տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների վրա: Հոգեբանական ճնշումներ

Կալանքը որպես խափանման միջոց ընտրելուց հետո վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ առանց որևէ հիմնավորման նոյեմբերի 5-ից արգելանք է դրվել Շանթ Հարությունյանի և նրա հետ կալանավորված անձանց տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների վրա: 2013 թ. դեկտեմբերի 18-ին Շանթ Հարությունյանը դիմել է վարույթն իրականացնող քննիչին՝ տեսակցությունների արգելանքը վերացնելու նպատակով, որը մերժվել է:

2013 թ. դեկտեմբերի 24-ին երեկոյան 20:00-ից Շանթ Հարությունյանը հայտարարել է անժամկետ հացադուլ՝ պահանջելով վերացնել տեսակցությունների և հեռախոսազանգերի վրա դրված արգելանքը: 2013 թ. դեկտեմբերի 26-ին անժամկետ հացադուլ են հայտարարել Լիպարիտ Պետրոսյանը և Վահե Մկրտչյանը՝ պահանջելով վերացնել տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների վրա դրված սահմանափակումը:

2014 թ. հունվարի 8-ին հացադուլ են հայտարարել նաև Ալեք Պողոսյանը, Միսակ Առաքելյանը, Ալբերտ Մարգարյանը, Ավետիս Ավետիսյանը:

Հացադուլավորների նկատմամբ կիրառվել են հոգեբանական ճնշումներ. Հացադուլավորների մեծ մասը հացադուլավորների համար նախատեսված խուց են տեղափոխվել՝ հացադուլ հայտարարելուց օրեր անց կամ ընդհանրապես չեն տեղափոխվել՝ տևական ժամանակ պահվելով անձանց հետ ուլքեր սնունդ են ընդունել: Մասնավորապես Վահե Մկրտչյանը հացադուլավորների համար նախատեսված խուց է տեղափոխվել հացադուլը դադարեցնելու նախորդ օրը, այն դեպքում երբ հացադուլը տևել է 17 օր: Ավետիս Ավետիսյանը առաձին խուց է տեղափոխվել հացադուլ հայտարարելուց 3 օր անց, իսկ Ալեք Պողոսյանը, Միսակ Առաքելյանը, Ալբերտ Մարգարյանը ընդհանրապես չեն տեղափոխվել առանձին խուց:

2014 թ. հունվարի 10-ին Շանթ Հարությունյանը դատապարտյալների հիվանդանոց տեղափոխվելուց հետո դադարեցրել է հացադուլը:

2014 թ. հունվարի 11-ին հացադուլը դադարեցրել են նաև Լիպարիտ Պետրոսյանը և Վահե Մկրտչյանը:

2014 թ. հունվարի 14-ին վարույթն իրականացնող մարմնի որևէ կերպ չհիմնավորված որոշմամբ վերացվել է տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների վրա դրված արգելանքը: Դրանից հետո մյուս հացադուլավորները ևս դադարեցրել են հացադուլը:

○ Շանթ Հարությունյանին առանց պատճառաբանության հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը, և այնտեղ հարկադիր պահելը

Երևան ք. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2013 թ. նոյեմբերի 19-ի որոշմամբ Շանթ Հարությունյանի նկատմամբ նշանակվել է դատահոգեբուժական ստացիոնար փորձաքննություն, որի պատճառով վերջինս 2015 թ. նոյեմբերի 20-ին տեղափոխվել և 20 օր պահվել է հոգեբուժարանում, արդյունքում ճանաչվել է մեղսունակ: Հարկ է նշել, որ դատարանի որոշման մեջ բացակայում են Շանթ Հարությունյանին հոգեբուժական հիմնարկում տեղավորելու և հարկադիր պահելու հիմքերը: Ըստ պաշտպանի Շանթ Հարությունյանը հոգեբուժարանում ենթարկվել է սթրեսի:

Ի պաշտպանություն Շանթ Հարությունյանի և նրա հետ միասին անօրինական կալանքի ենթարկված մյուս անձանց նախաձեռնվել են բողոքի մի շարք ակցիաներ՝ մամուլի ասուլիսներ, խաղաղ երթեր, ցույցեր, ստորագրահավաք, որոնց մասնակցել են հարյուրավոր մարդիկ՝ քաղաքացիներ, ակտիվիստներ, իրավապաշտպաններ, ընդդիմադիր քաղաքական գործիչներ:

Մի շարք իրավապաշտպաններ և ընդդիմադիրներ հայտարարել են, որ Շանթ Հարությունյանը և ընկերները քաղաքանտարկյալներ են: Իրավապաշտպանները Շանթ Հարությունյանի կոչերը որակել են հռետորական խոսքեր, իսկ նոյեմբերի 5-ին ոստիկանության գործողությունները պրովոկացիայի վառ օրինակ: Ըստ իրավապաշտպանների, եթե ոստիկանությունը բախումներ չհրահրեր նոյեմբերի 5-ին խաղաղ երթ էր լինելու:

Նոյեմբերի 5-ի դեպքերից հետո Շանթ Հարությունյանին և նրա հետ միասին անօրինական կալանքի ենթարկված Ավետիս Ավետիսյանին, Լիպարիտ Պետրոսյանին, Արմեն Հովհաննիսյանին, Վարդան Վարդանյանին, Միսակ Առաքելյանին, Ալբերտ Մարգարյանին, Անուշավան Գրիգորյանին, Մկրտիչ Հովհաննիսյանին, Վահե

Մկրտչյանին, Հայկ Հարությունյանին, Տիգրան Պետրոսյանին, Ալեք Պողոսյանին և Սևակ Մնացականյանին քաղաքական բանտարկյալ է ճանաչել նաև ամերիկյան «Human Rights Defense» իրավապաշտպանական կազմակերպությունը:

Ստեղծվել է «Շանթ և Ազատություն» հիմնադրամ, որի նպատակն է օգնություն ցուցաբերել Հայաստանում քաղաքական հայացքների համար հետապնդվողներին ու ձերբակալվածներին և նրանց ընտանիքներին:

2013թ. նոյեմբերի 5-ի դեպքերին անդրադարձել է նաև Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը:

Շանթ Հարությունյան և ընկերներ գործով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներգրավվել է փաստաբան Ինեսսա Պետրոսյանը, ով ներկայացրել է Շանթ և Շահեն Հարությունյանների շահերը նախաքննության և դատաքննության փուլերում և գանգատ է ներկայացրել Սարգոս իրավունքների Եվրոպական դատարան Շանթ Հարությունյանի և նրա գաղափարակից տաս ընկերների անունից:

15. Հայկ Կյուրեղյան

Ձերբակալվել է 2014 թ. հունիսի 12-ին:

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն), 316-րդ հոդվածի 2-րդ մաս (ուստիկանի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը):



Դատապարտվել է 9 տարվա ազատազրկման:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2015 թ. սեպտեմբերի 15-ին հրապարակված դատավճռով Հայկ Կյուրեղյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 2-րդ մասով և 258 հոդվածի 4-րդ մասով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 2-րդ մասով դատապարտելով ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 4-րդ մասով դատապարտելով՝ ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Շ. Կյուրեղյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում՝ 9 (ինը) տարի ժամկետով:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աջակցությամբ⁵ ներգրավվել է փաստաբան Մուշեղ Շուշանյանը ում միջոցով Հայկ Կյուրեղյանը 2015 թ. հոկտեմբերի 23-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից 2015 թ. սեպտեմբերի 15-ին իր դեմ կայացված մեղադրական դատավճռի դեմ:

Գործի նկարագրությունը

2014 թ. հունիսի 12-ին Հայկ Կյուրեղյանը Շանթ Հարությունյանի և ընկերների դատական նիստի մեկնարկից առաջ դատարանի բակում կայանած մեքենաներից մեկին՝ կանգնած օդամղիչ ատրճանակով կրակոցներ է արձակել ոստիկանների ուղղությամբ՝ ոստիկաններին հորդորելով իրեն ձերբակալել՝ այդ կերպ իր բողոքն արտահայտելով քաղաքատարկյալ Շանթ Հարությունյանի և ընկերների գործով դատավարության կապակցությամբ:

Հետագայում Շ. Կյուրեղյանը հայտարարել է, որ ինքը դուրս է եկել գործող համակարգի և այդ համակարգով իշխող ռեժիմի դեմ, իսկ իր «կրակոցները» ուղղված են եղել բացառապես համակարգի դեմ:

Կրակոցներ արձակելուց ընդհանուր անց Հայկ Կյուրեղյանն բերման է ենթարկվել ոստիկանություն:

⁵ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներգրավել է փաստաբան Մուշեղ Շուշանյանին Հայկ Կյուրեղյանի անունից Վերաքննիչ և Վճռաբեկ բողոքներ և ԵԴ գանգատ ներկայացնելու նպատակով:

ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խումբը 2014 թ. հունիսի 13-ին Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ կատարած այցից հետո պարզել է, որ Հայկ Կյուրեղյանը բռնության է ենթարկվել՝ ստացել է մի շարք մարմնական վնասվածքներ և որ նրան ձերբակալելիս պաշտպան չեն ներգրավել:

Հայկ Կյուրեղյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Օգոստոսի 21-ին ավելացվել է նաև երկրորդ մեղադրանքը՝ 316-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ոստիկանի նկատմամբ վտանգավոր բռնություն գործադրելը:

Հ. Կյուրեղյանի ակցիայից տուժող են ճանաչվել 5 ոստիկաններ, որոնցից 4-ի վնասվածքները առողջության համար թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում, իսկ մեկի վնասվածքը առողջության համար թեթև վնասի հատկանիշներ է պարունակել:

Առկա են դեպքի տեսագրությունները, որտեղ երևում է, որ որևէ անձ կրակոցների հետևանքով մարմնակ վնասվածք չի ստացել:

Կյուրեղյանի վերաբերյալ քրեական գործով առաջին դատական նիստը կայացել է 2014 թ. նոյեմբերի 7-ին: Գործը քննող դատավորը նկատողություն է արել «ոտքի, դատարանն է գալիս» խոսքերի ժամանակ ոտքի չբարձրացած Հ. Կյուրեղյանին, ով իր ոտքի չկանգնելը բացատրել է նրանով, որ դատարանը ինքնակոչ կառավարության դատարան է, ենթարկվում է ինքնակոչ կառավարությանը և նրա խամաճիկն է: Կյուրեղյանը ոտքի չի կանգնել նաև հաջորդ դատական նիստերի ժամանակ, ինչի պատճառով Կյուրեղյանի նկատմամբ կիրառվել է դատական սանկցիա՝ նա տևական ժամանակով հեռացվել է դատական նիստերի դահլիճից: Դատարանի նախաձեռնությամբ ներգրավվել է հանրային պաշտպան, ով փաստացի ոչ մի ծառայություն չի մատուցել/պաշտպանություն չի իրականացրել, քանի որ Հ. Կյուրեղյանը չի ցանկացել, որ նա իրականացնի իր պաշտպանությունը և չի լիազորել, որ նա որևէ գործողություն կատարի իր գործի քննության ընթացքում: Փաստացի Կյուրեղյանը զրկվել է դատարանում իր շահերը պաշտպանելու իրավունքից:

2015 թ. սեպտեմբերի 15-ին՝ շուրջ մեկ տարի տևած դատավարությունից հետո, Հայկ Կյուրեղյանը ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատապարտվել է 9 տարվա ազատազրկման:

Դատարանը պատիժ սահմանելիս չի առաջնորդվել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1992թ. հոկտեմբերի 19-ի No. R (92) 17 ռեկոմենդացիայով⁶, որը սահմանում է, որ ա/ պատժի ծանրությունը պետք է համաչափ լինի արարքի լրջությանը, (b) պետք է հաշվի առնել պատժի հետևանքը անհատի համար, (c) պետք է պատժի ծանրությունը ողջամտորեն կանխատեսելի լինի: Նշված չափանիշներից ոչ մեկը Հ. Կյուրեղյանի նկատմամբ չի ապահովվել: Դատարանը սահմանել է ակնհայտորեն չարդարացված խիստ պատիժ:

Ըստ Հայաստանյան իրավապաշտպանների Հայկ Կյուրեղյանի նկատմամբ կայացվել է ոչ թե դատավճիռ այլ հաշվեհարդար ռեժիմի դեմ դուրս գալու համարձակության համար:

⁶ Տե՛ս [http://www.coe.int/t/dghl/standardsetting/prisons/Recommendation%20R%20\(92\)%2017_E.pdf](http://www.coe.int/t/dghl/standardsetting/prisons/Recommendation%20R%20(92)%2017_E.pdf) հղումով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1992թ. հոկտեմբերի 19-ի No. R (92) 17 ռեկոմենդացիան (RECOMMENDATION No. R (92) 17), մասնավորապես դրա A(4), A(8), B(4) կետերը:

Մի շարք ընդդիմադիր կուսակցություններ, ազատամարտիկներ, իրավապաշտպաններ, ինչպես նաև այլ քաղաքացիական կազմակերպություններ, մասնավորապես՝ Շանթ Հարությունյանը Կյուրեղյանին համարում են քաղաքական բանտարկյալ:

Ոստիկանների կողմից Հայկ Կյուրեղյանի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ ՔՕ 309 հոդվածի հատկանիշներով (պաշտոնեական լիազորությունները անցնելը) հարուցվել է քրեական գործ, սակայն որոշ ժամանակ անց քրեական գործը կարճվել է և որևէ ոստիկան պատասխանատվության չի ենթարկվել:

16. Վոլոդյա Ավետիսյան

Զերբակավել է 2013 թ. սեպտեմբերի 20-ին:

Առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ (խարդախության փորձ, որը կատարվել է կաշառք ստանալու պատրվակով), 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ ու 5-րդ կետեր (Խարդախություն, որը կատարվել է՝ խոշոր չափերով, կաշառք ստանալու պատրվակով):



Դատապարտվել է 6 տարվա ազատազրկման: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014 թ. հուլիսի 17-ի դատավճռով Վոլոդյա Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդ. 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-178 հոդ. 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցանքների կատարման մեջ և ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդ. 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 34-178 հոդ. 2-րդ մասի 5-րդ կետով՝ ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդ. հիման վրա, հանցանքների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վոլոդյա Ավետիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 6 տարի ժամկետով: Նույն դատավճռով դատարանը վճռել է Վոլոդյա Ավետիսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ:

Դատարանը վճռել է նաև Վ. Ավետիսյանից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 2000 ԱՄՆ դոլարին համարժեք 814.260 ՀՀ դրամ, որպես հանցավոր ճանապարհով ստացված գումար:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թ. սեպտեմբերի 16-ի որոշմամբ առաջին աստիճանի դատարանի դատավճիռը թողնվել է անփոփոխ, իսկ պաշտպանական կողմի բերված վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման: Դատարանի վճիռը բողոքարկվել է վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանը գործը վարույթ չի ընդունել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Կալանքը կրում է «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում:

Գործի նկարագրությունը

2013 թ. հունիսի 4-ից ազատամարտիկ Վոլոդյա Ավետիսյանը ազատամարտիկների սոցիալական խնդիրները բարձրաձայնելու նպատակով նստացույց է սկսել Երևանի Ազատության հրապարակում: Վոլոդյա Ավետիսյանին են միացել

բազմաթիվ ազատամարտիկներ Երևանից և հանրապետության այլ մարզերից: Ազատամարտիկները բողոքի ցույցեր են կազմակերպել ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի այլ քաղաքներում:

2013 թ. սեպտեմբերի 20-ին Վոլոդյա Ավետիսյանը ձերբակալվել և սեպտեմբերի 22-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (խարդախության փորձ, որը կատարվել է կաշառք ստանալու պատրվակով): Դատարանի որոշմամբ Վոլոդյա Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2014 թ. փետրվարի 14-ի որոշմամբ Վոլոդյա Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (խարդախության փորձ, որը կատարվել է կաշառք ստանալու պատրվակով), 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ ու 5-րդ կետերով (Խարդախությունը, որը կատարվել է խոշոր չափերով, կաշառք ստանալու պատրվակով):

Ըստ մեղադրական եզրակացության՝ 2013 թ. հուլիսի 29-ին Ավետիսյանը 500 ԱՄՆ դոլար է պահանջել Ա. Մաթոսյանից՝ նրա որդուն Լեոնային Ղարաբաղի զորամասերից մեկում համակարգչային օպերատոր նշանակելու համար: 2013 թ. օգոստոսի 13-ին Ավետիսյանը Հ. Զաքարյանից վերցրել է 2000 ԱՄՆ դոլար վերջինիս թոռանը ժամկետային ծառայությունից ազատելու համար:

Ավետիսյանի կողմնակիցները համոզված են, որ երկու մեղադրանքներն էլ կեղծ են, Վոլոդյա Ավետիսյանը հանդիսանում է քաղաքական բանտարկյալ և հետապնդվում է ազատամարտիկների սոցիալական պայմանները բարելավելու նպատակով բողոքի շարժումը ղեկավարելու համար: Ինքը՝ Վ. Ավետիսյանը, բազմիցս հայտարարել է, որ որոշակի բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում նաև ՀՀ ՊՆ նախարար Ս. Օհանյանը իրեն փորձել են համոզել հրաժարվել ազատամարտիկների սոցիալական պայմանների բարելավմանն ուղղված պայքարից, առաջարկել են պաշտոն, «ֆինանսական աջակցություն» և ինչպես նաև խոստացել աջակցել եկամտաբեր բիզնես դնելու հարցում, միաժամանակ նախազգուշացնելով, որ համաձայնության չգալու դեպքում նա լուրջ խնդիրներ է ունենալու:

Պաշտպանական կողմը հայտարարել է, նախաքննական մարմնի կողմից մեղադրանքի հիմքում կեղծ, շինծու ցուցմունքներ դնելու և մի շարք դատավարական խախտումների մասին:

Մեղադրանքի հիմքում դրվել են անձանց վկայություններ, որոնք թեև հարցաքննվել են որպես վկա, սակայն գտնվել են փաստացի կասկածյալի կարգավիճակում: Վկաներից մեկի նախաքննական ցուցմունքները դատարանի կողմից ճանաչվել են անթույլատրելի այն հիմքով, որ վերջինս տառապում է հիվանդություններով, որոնց պարագայում քննիչը նրան հարցաքննել է առանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108 հոդ. 3-րդ մասի կարգով դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու: Վկաներից մի քանիսն ընդհանրապես չեն ներկայացել դատարան:

Վոլոդյա Ավետիսյանին որպես քաղաքականապես և ճանաչել մի շարք հասարակական կազմակերպություններ, իրավապաշտպաններ և ընդդիմադիր գործիչներ:

Վոլոդյա Ավետիսյանի նկատմամբ քաղաքական հետապնդմանն է անդրադարձել նաև ԱՄՆ Պետքարտուղարությունն իր «Մարդու իրավունքների վիճակը 2014 թ.» տարեկան զեկույցում⁷:

17. Վարդան Պետրոսյան

Կալանավորվել է 2013 թ.-ի նոյեմբերի 8-ին

Առաջադրված մեղադրանքը՝ ՔՕ-ի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անգգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:



Ղատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով և 2 տարով զրկվել է մեքենա վարելու իրավունքից: 2015թ. սեպտեմբերի 4-ից Վարդան Պետրոսյանը պատիժը կրում է բաց ռեժիմով:

Գործի նկարագրությունը

Բեմադրիչ, դերասան Վարդան Պետրոսյանը մեծ համբավ է ձեռք բերել դեռ 80-ականներին, երբ սկսնակ դրամատուրգ Վահրամ Սահակյանի հետ ստեղծել էր «Ոգնիներ» թատրոն-ստուդիան:

90-ականներին դերասանը տեղափոխվել է Ֆրանսիա, որտեղ շարունակել է ստեղծագործական գործունեությունը, մասնավորապես, Ռոբեր Օսեյնի թատրոնում: Երևանում Պետրոսյանի երգիծական բեմադրությունները մշտապես լեփ-լեցուն դահլիճներ են հավաքում և դառնում թեժ քննարկումների թեմա: Վարդան Պետրոսյանը հայտնի է ՀՀ իշխանությունների և պաշտոնյաների նկատմամբ սուր քննադատությամբ:

2013 թ. հոկտեմբերի 20-ին Եղվարդ-Երևան ավտոճանապարհին երթևեկելիս Վարդան Պետրոսյանը տրանսպորտային վթարի է ենթարկվել՝ հարվածելով մեկ այլ մեքենայի, որի ուղևորներից երկուսը մահացել են: Ինքը՝ Վարդան Պետրոսյանը, ծանր վնասվածքներ է ստացել և մի քանի վիրահատությունների ենթարկվել:

Վարդան Պետրոսյանը նոյեմբերի 8-ին կալանավորվել է՝ մահացու ելքով երթևեկության կանոնների խախտման մեղադրանքով: Վարդան Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անգգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:

2015 թ. հունվարի 29-ին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից Վարդան Պետրոսյանը դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով և 2 տարով զրկվել մեքենա վարելու իրավունքից⁸: Տուժող կողմն ու մեղադրող դատախազը վճիռը բաղադրել են, սակայն Վերաքննիչ դատարանը 2015 թ. մայիսի 5-ին անփոփոխ է թողել առաջին ատյանի դատարանի կայացրած վճիռը: Տուժող կողմը դիմել է նաև Վճռաբեկ դատարան, սակայն գործը վարույթ չի ընդունվել: 2015 թ. սեպտեմբերի 4-ից Վարդան Պետրոսյանը պատիժը կրում է բաց ռեժիմով:

Վարդան Պետրոսյանի փաստաբան Նիկոլայ Բադդասարյանը հայտնել է, որ գործով քննիչը մի շարք ապօրինություններ է թույլ տվել, նա մասնավորապես նշել է, որ

⁷ 2014 Human Rights Reports: Armenia: <http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/2014/eur/236496.htm#>

⁸ Vardan Petrosyan was sentenced to 5 Years in Prison: <http://iravaban.net/en/76176.html>

եղել է հանձնարարություն Վարդան Պետրոսյանին ձերբակալելու համար և այդ հանձնարարությունը կատարելու համար ստեղծվել են արհեստական ապացույցներ:

«Ժառանգություն» կուսակցությունն իր հայտարարության մեջ նշել է, որ Վարդան Պետրոսյանի դեմ իրականացվել է քաղաքական հետապնդում: Մի շարք մշակույթի գործիչներ կարծիք են հայտնել, որ իշխանությունները Վարդան Պետրոսյանի նկատմամբ հաշվեհարդար են տեսել, քանի որ նա ազատորեն արտահայտում էր իր տեսակետը իշխանությունների և պաշտոնյաների վերաբերյալ:

«Հիմնադիր խորհրդարանի» անդամների նկատմամբ իրականացված քաղաքական հետապնդումները⁹

«Հիմնադիր խորհրդարանի» (ՀԽ) (նախկին անվանումը՝ «Նախախորհրդարան» (ՆԽ) և «Հարյուրամյակն առանց ռեժիմի» շարժման (այսուհետ՝ շարժում) հիմնումից ի վեր դրանց անդամները ենթարկվել են հետապնդումների, որոնք կրել են կանոնավոր բնույթ և հաճախ ուղեկցվել բռնի միջոցներով, օրինակ՝ շարժման անդամներին պատկանող մեքենաների հրկիզում, ծեծ և անզամ դանակահարություն:

Թեև նշած դեպքերով քրեական գործեր են հարուցվել, մեղավորները չեն հայտնաբերվել և պատասխանատվության չեն ենթարկվել:

Շարժման անդամների դեմ ուղղված բռնություններն իրենց գագաթնակետին հասան 2015 թ. հունվարի 31-ին «100-ամյակն առանց ռեժիմի» կարգախոսով ավտոերթի ժամանակ:

Ոստիկանության աշխատակիցները, այդ թվում՝ դիմակավոր ոստիկանները և քաղաքացիական հագուստով մի խումբ անձինք Բերձորի մոտ՝ Գորիս-Ստեփանակերտ մայրուղու վրա, արգելափակեցին Հայաստանից Արցախ մեկնող շուրջ 40 մեքենայի ճանապարհը՝ թույլ չտալով շարժման անդամներին հատել Արցախի սահմանը՝ հարձակում գործելով նրանցից մի քանիսի վրա:

Հարձակումից հետո «Հիմնադիր խորհրդարանի» տարածած հայտարարության մեջ նշվել է, որ ավտոերթի շուրջ մեկ տասնյակ մասնակից վնասվածքներ է կրել դարանակալած ԼՂՀ ոստիկանության աշխատակիցների, այդ թվում՝ մի խումբ քաղաքացիական հագուստով և դիմակավոր ոստիկանների կողմից: Ոստիկանները դաժան ծեծի են ենթարկել ավտոերթի մասնակիցներին, հարձակվել կանանց և երեխաների վրա, վնաս հասցրել 20 մեքենայի, ապօրինաբար բռնագրավել մի քանի տեսախցիկ և որոշ անձնական իրեր: Ըստ գնահատումների՝ հարձակման հետևանքով հասցված վնասը կազմել է շուրջ 40 000 ԱՄՆ դոլար:¹⁰

Ի թիվս այլոց, ծանր վնասվածքներ են ստացել՝ Շարժման առաջնորդ և Շուշիի հատուկ գումարտակի հրամանատար Ժիրայր Մեֆիլյանը, «Նոյյան Տապան» լրատվական գործակալության լրագրող Անուշավան Շահնազարյանը, Արցախի պատերազմի վետերան Պավլիկ Մանուկյանը և «Հիմնադիր խորհրդարանի» փոխնախագահ Վարուժան Ավետիսյանը:



⁹ «Հիմնադիր խորհրդարանը» հիմնադրվել է 2015 թվականի հունվարին «Նախախորհրդարան» քաղաքական շարժման կողմից «իշխող վարչակարգը խաղաղ ճանապարհով տապալելու և այլընտրանքային պետական մարմինների հիմնման և օրինականացման միջոցով նոր կարգի պետություն կազմելու» նպատակով:

¹⁰ Artsakh Police Face Dismissal over Berdzor Attack («Արցախի ոստիկանության աշխատակիցներն ազատվել են աշխատանքից Բերձորի հարձակումից հետո»), <http://asbarez.com/134488/artsakh-police-face-dismissal-over-berdzor-attack/>

Ambush and Attack in Berdzor («Բերձորի դարանակալությունը և հարձակումը»), http://civilnet.am/2015/02/01/ambush-and-attack-in-berdzor/#.VjIn_dLhCM9

Բերձորի հարձակման տեսանյութը՝ <http://lurer.com/?p=171823&l=am>

Բերձորի հարձակումից երկու ժամ առաջ ավտոերթին մասնակցելու նպատակով Արցախից մեկնած Քերոբ Ղազարյանը և Մխիթար Ավետիսյանը դաժան ծեծի են ենթարկվել հանցագործների կողմից, և նշանակալի վնաս է հասցվել նրանց մեքենաներին: Բերձորի հարձակումից հետո հասարակության և լրատվամիջոցների կողմից ճնշումների արդյունքում Արցախի նախագահ Բակո Սահակյանը հանձնարարել է ծառայողական քննություն անցկացնել, ինչի արդյունքում ոստիկանության աշխատակիցներից ոմանք ենթարկել են կարգապահական պատասխանատվության: «Հիմնադիր խորհրդարանը» հայտարարել է, որ այդ քայլով և «ծառայողական քննություն» անցկացնելով փորձ է արվել կոծկել իրական հանցագործությունը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործի որոշ կողմերը չեն ներկայացվել:

Բացի այդ, հանցագործությունները կատարվել են Հայաստանի վարչական տարածքի սահմաններում և ուղղած են եղել Հայաստանի քաղաքացիների դեմ: Կատարվածի իրական մեղավորներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ որևէ նշանակալի քայլ այդպես էլ չի կատարվել, և անգամ քրեական գործ չի հարուցվել: Ընդ որում, իշխող կուսակցության (Հայաստանի Հանրապետական կուսակցություն) անդամները շարունակել են զրպարտել ահաբեկչության միջադեպում տուժած անձանց: Ի պատասխան՝ «Հիմնադիր խորհրդարանը» բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդարանական խմբի քարտուղար Գագիկ Մելիքյանի դեմ՝ նրան մեղադրելով զրպարտության մեջ:

Քրեական գործ է հարուցվել միայն Արցախի ոստիկանությունը և միայն «Հիմնադիր խորհրդարանի»՝ ավտոերթին Արցախից եկած երկու մասնակցին ծեծի ենթարկելու և վնասվածք հասցնելու դեպքերով: Ներկայումս մեղավորները չեն հայտնաբերվել և պատասխանատվության չեն ենթարկվել:

2015թ. ապրիլի 7-ին Ազգային անվտանգության ծառայության և Հատուկ քննչական վարչության ստորաբաժանումների կողմից խուզարկվել է շարժման և դրա առաջնորդների հետ առնչվող տասը բնակարան և հինգ գրասենյակ: Վարուժան Ավետիսյանին, Պավել Մանուկյանին, Գևորգ Սաֆարյանին, Ժիրայր Սեֆիլյանին և Գարեգին Չուգասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ Հոդվածի 1-ին կետի հատկանիշներով (հանցագործության նախապատրաստում, զանգվածային անկարգությունների կազմակերպում), իսկ Արամ Հակոբյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի հատկանիշներով (զենք, զինամթերք ապօրինի պահելը):

Ապրիլի 9-ին և 10-ին, Վարուժան Ավետիսյանի, Պավել Մանուկյանի, Գևորգ Սաֆարյանի, Ժիրայր Սեֆիլյանի և Գարեգին Չուգասյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել երկամսյա կալանքը: Այնուհետև Ժիրայր Սեֆիլյանը, Վարուժան Ավետիսյանը և Պավել Մանուկյանը տեղափոխվել են «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ, իսկ Գարեգին Չուգասյանը և Գևորգ Սաֆարյանը՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ: Ինչ վերաբերում է «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Արամ Հակոբյանին, կալանքի փոխարեն նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել 500.000 դրամի (1000 ԱՄՆ դոլար) չափով գրավը, և նա ազատ է արձակվել գրավի դիմաց:

Քաղաքատարկյալներին այցելելուց հետո ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկում անցկացնող խումբը հայտարարություն է տարածել Գևորգ Սաֆարյանի պահման վայրի պայմանների վերաբերյալ: Մասնավորապես, Խմբի անդամները մտահոգություն են հայտնել քաղաքական հայացքների պատճառով ՔԿՀ-ում Գ. Սաֆարյանի նկատմամբ իր իսկ խցակիցների կողմից հնարավոր ճնշումների վերաբերյալ: Անդրադառնալով այցին՝ նշվել է հետևյալը. «Այլ կալանավորների հետ գոյակցությանն առնչվող խնդիրների լուծմանն

ուղղված ջանքերն արդյունավետ կլինեն, եթե կանխվեն նրա դեմ ուղղված մյուս կալանավորների կողմից ֆիզիկական և հոգեբանական ճնշումների բոլոր հնարավոր դրսևորումները, մասնավորապես, նման ճնշումները կարող են պայմանավորված լինել այդ անձանց բողոքներով՝ նրա սոցիալ-քաղաքական գործունեության առնչությամբ»:

ՀՀ քննչական կոմիտեն հայտարարություն է տարածել այն մասին, որ Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի օրը նախատեսված հանրային միջոցառումների ժամանակ «Հիմնադիր խորհրդարանի» ծրագրված գործողությունները պարունակել են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ հասարակական անկարգությունների ենթադրյալ հանցագործության նախապատրաստման հատկանիշներ, ուստի ՀՀ Քննչական կոմիտեի Հատուկ կարևորության գործերի քննության գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ (զանգվածային անկարգությունների նախապատրաստում) հոդվածների հատկանիշներով:

Մարտի 18-ին տարածած հայտարարության մեջ «Հիմնադիր խորհրդարանը» նշել է, որ ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի օրը, «Հարյուրամյակն առանց ռեժիմի» շարժումը չի ձեռնարկել որևէ քայլ, որը կարող է խաթարել օրակարգով նախատեսված միջոցառումների իրականացումը: Շարժումը միշտ գործել է և գործելու է օրենքին, Սահմանադրությանը և ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան:

Վերոնշյալ ձեռքակալությունները և դրանց հաջորդած կալանավորումն անօրինական բնույթ են կրել, քանի որ հիմնված են եղել միմիայն կասկածանքի վրա, որը հիմնավորված չէ արժանահավատ ապացույցներով: Հաշվի առնելով, որ կալանավորներն ազատագրվել են իրենց քաղաքական հայացքների համար, նրանք համարվում են քաղաքանտարկյալներ միջազգային սահմանման իմաստով:

Մի քանի քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների ներկայացուցիչներ հայտնել են, որ ՀԽ-ի անդամները հետապնդումների են ենթարկվել իրենց քաղաքական հայացքների համար՝ դատապարտելով իրավապահ մարմինների կողմից նրանց դեմ ձեռնարկված գործողությունները: ԵԽԽՎ նախագահ Անն Բրասերը 2015թ. ապրիլի 13-15 Հայաստան կատարած այցի ընթացքում պատասխանելով ՀԽ ձեռքակալված անդամների վերաբերյալ լրագրողի հարցին՝ ասել է, որ ոչ ոք իրավունք չունի որևէ մեկին զրկել ազատությունից քաղաքական հայացքների պատճառով, նման անձինք քաղաքանտարկյալներ են: «Հյումն ռայթս ուոթչ» իրավապաշտպան կազմակերպությունը գրություն է ուղարկել Հայաստանի գլխավոր դատախազին՝ մտահոգություն հայտնելով այն հանգամանքի շուրջ, որ ՀԽ-ի անդամները հալածանքների են ենթարկվում իրենց քաղաքական հայացքների համար, և նրանց առաջադրված մեղադրանքներով ոտնահարվել է նրանց ազատ արտահայտվելու իրավունքը:

Նշված հինգ բանտարկյալներին արգելվել է ցանկացած կերպ հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ (թերթեր, համացանց, հեռախոսազանգեր և այլն), սակայն ավտոբիտար և բռնապետական ռեժիմներին բնորոշ առավել անմարդկային արգելքը ընտանիքի անմիջական անդամների հետ տեսակցությունների և հաղորդակցման արգելքն էր: Ձեռքակալությունից քսան օր անց՝ 2015թ. ապրիլի 27-ին, քննիչը թույլատրել է միայն ընտանիքի անմիջական անդամների հետ տեսակցությունը:

Դատախազ Վ. Պողոսյանը լրացուցիչ վերանայել է գործի նյութերը, ինչի արդյունքում պարզվել է, որ ընդդիմադիրները նախատեսել են զանգվածային անկարգություններ կազմակերպել 2015 թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Հայաստանում կայացած հանրային միջոցառումների ժամանակ: Պաշտոնական կողմը տեղեկացրել է, որ նման գործողությունները կանխվել են իրավապահների կողմից:

Մայիսի 4-ին ՀՀ գլխավոր դատախազության հաղորդմամբ 2015 թ. ապրիլի 7-ին ձերբակալված «Հիմնադիր խորհրդարան» ընդդիմադիր շարժման հինգ անդամ, այդ թվում՝ շարժման առաջնորդ Ժիրայր Մեֆիլյանը, ակտիվիստ Գևորգ Մաֆարյանը, շարժման փոխնախագահ Վարուժան Ավետիսյանը, ակտիվիստ Պավել Մանուկյանը և շարժման նախագահ Գարեգին Զուքասյանն ազատ են արձակվել կալանքից չհեռանալու մասին ստորագրությամբ:

Նշված որոշմամբ՝ դատախազությունը հայտարարել է, որ Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի օրն անցել է, և վերոնշյալ անձինք չեն կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը: Նախաքննության ընթացքում իրականացվել են բոլոր անհրաժեշտ անհետաձգելի քննչական գործողությունները, և լինելով ազատության մեջ՝ նշված անձինք չեն կարող խափանել գործի մինչդատական քննության ընթացքը:

Զնայած նրան, որ վերոնշյալ անձինք ներկայումս գտնվում են ազատության մեջ, նրանք չեն կարող լքել երկիրը և դեռևս գտնվում են կասկածյալի կարգավիճակում:

Փաստորեն քրեական գործի վարույթը երկու ամիսը մեկ անգամ առանց որևէ լուրջ հիմնավորման երկարաձգելով և դրա շրջանակներում վերոհիշյալ անձանց մեղադրյալի կարգավիճակում պահելով՝ նրանց վերաբերում են որպես քաղաքական պատանդների և խոչընդոտում են նրանց անձնական և մասնագիտական գործունեությանը:

Մասնավորապես, 2015 թ. հուլիսի 4-ին «Հիմնադիր խորհրդարան»-ը հայտարարություն է տարածել, այն մասին, որ «Հիմնադիր խորհրդարան»-ի նախագահ Գարեգին Զուքասյանին թույլ չի տվել Ինտերնետի կառավարման ամենամյա «Եվրոդիգ 2015» համաեվրոպական հեղինակավոր համաժողովին մասնակցելու նպատակով մեկնել Բուլղարիա և ներկայացնելու Հայաստանը:

2015 թ. նոյեմբերի 6-ին «Հիմնադիր խորհրդարանը» նամակով դիմել է ՀՀ Քննչական կոմիտեի նախագահին, ՀՀ գլխավոր դատախազին և նախաքննություն իրականացնող քննչական խմբի ղեկավարին, տեղեկացնելով, որ հերթական հրավերն է ստացել ՄԱԿ-ից մասնակցելու միջազգային մասշտաբի կոնֆերանսի և խնդրել թույլ տալ դուրս գալ Հայաստանից:

Հարկ է նշել, որ մայիսի 21-ին արգելվել է Հայաստան ժամանած «Հայկական վերածնունդ» կազմակերպության Փարիզի մասնաճյուղի համակարգող, Հիմնադիր խորհրդարանի պատգամավոր Շանթ Ոսկերչյանի մուտքը Հայաստան:

«Գ.Զուքասյանին ելքի, իսկ դրանից առաջ՝ «Հայկական վերածնունդ» համահայկական կազմակերպության Փարիզի մասնաճյուղի համակարգող Շանթ Ոսկերչյանին մուտքի, թույլտվություն չտալու դեպքերը ապացուցում են, որ Հայաստանում վերականգնվել և տիրահոշակ ստալինյան մեթոդներով, այն է՝ օրենքը արհամարհելով ու ոտնահարելով, կիրառվում են այսպես կոչված «սև ցուցակները»։ գրել է newsbook.am լրատվականը:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի մասին

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը /այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ/ ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատներին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպությունն ունի ներկայացուցչություններ Սպիտակ և Երևան քաղաքներում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը: